

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՒ ԷԿՈՆՈՎԻԿԱՅԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. Սանդոյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ  
Մ. Միքայելյան**

14 ապրիլ 1999 թ. N 58-ՍՍ

14 ապրիլ 1999 թ. N 1/1-126

## **ՀՐԱՄԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՐԿՎՈՂ ՇԱՀՈՒՑԹԸ ՈՐՈՇԵԼԻՄ ՓԱՍՏԱՑԻ (ԲՆԱԿԱՆ) ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի հաղորդում և բաշխում, ջերմային էներգիայի ու բնական գազի փոխադրում և բաշխում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը գույքի (էլեկտրական և ջերմային էներգիա, բնական գազ)՝ փաստաթղթերով հիմնավորված փաստացի (բնական) կորստի մասով նվազեցման չափի սահմանման նպատակով՝

#### ***Հրամայում ենք.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում տնտեսավարող սուբյեկտների հարկվող շահույթը որոշելիս փաստացի (բնական) կորուստների որոշման կարգը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն հրամանով հաստատված Կարգի համաձայն համախառն եկամտի նվազեցումը փաստացի (բնական) կորստի մասով իրականացվում է էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի բնագավառներում տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ սկսած 1998 թվականի հունվարի 1-ից:
3. Սույն հրամանով հաստատված կարգը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

## Կ Ա Ր Գ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՐԿՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԸ ՈՐՈՇԵԼԻՄ ՓԱՍՏԱՅԻ (ԲՆԱԿԱՆ) ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Սույնով սահմանվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի և ՀՀ կառավարության «ՀՀ էներգահամակարգի մինչև 2001 թվականի զարգացման միջոցառումների մասին» 07.09.98 թ. N 555 որոշման 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների հարկվող շահույթը որոշելիս, դրանց գույքի (էլեկտրական և ջերմային էներգիա, բնական գազ)՝ փաստաթղթերով հիմնավորված փաստացի (բնական) կորստի չափի որոշման և այդ մասով համախառն եկամտի նվազեցման կարգը:

2. Սույն կարգը տարածվում է էլեկտրական էներգիայի հաղորդում և բաշխում, ջերմային էներգիայի ու բնական գազի փոխադրում և բաշխում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների (այսուհետև՝ էներգամատակարարներ) վրա՝ անկախ դրանց սեփականության ձևից:

3. Սույն կարգի շրջանակներում օգտագործված են հետևյալ հասկացությունները.

**Էլեկտրական, ջերմային, գազատար ցանց** - էներգամատակարարի տնօրինության տակ գտնվող էլեկտրաէներգիայի հաղորդում կամ բաշխում, ջերմային էներգիայի և բնական գազի փոխադրում կամ բաշխում իրականացնող էներգատեղակայանքների և սարքավորումների համակարգ:

**Փաստացի (բնական) կորուստ** - էլեկտրական, ջերմային և գազատար ցանցերում տեխնոլոգիական պրոցեսներով և հաշվառքի սարքերի փաստացի սխալանքով պայմանավորված անխուսափելի կորուստի, որի չափը որոշվում է ցանցի մաթեմատիկական մոդելով՝ հաշվետու ժամանակահատվածում մատակարարված էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի քանակով և էներգիայի ցանցի տեխնիկական ու ռեժիմային պարամետրերի փաստացի վիճակի գնահատված արժեքներով, ինչպես նաև իրավական նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող փաստաթղթերով հիմնավորված կորուստի գումարային մեծություն:

4. **Էլեկտրական, ջերմային և գազատար ցանցերում** տեխնոլոգիական պրոցեսներով և հաշվառքի սարքերի փաստացի սխալանքով պայմանավորված անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդները մշակում և, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի հետ համաձայնեցնելով, հաստատում է ՀՀ էներգետիկայի նախարարությունը՝ ըստ սահմանված կարգի:

5. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում տնտեսավարող սուբյեկտներից հարկվող շահույթի մեծության որոշման նպատակով, դրանց համախառն եկամտի նվազեցման ենթակա **փաստացի (բնական) կորուստների** չափը յուրաքանչյուր ամսվա ավարտին հաստատում են տնտեսավարող սուբյեկտների գույքագրող հանձնաժողովները, որպես հիմք ընդունելով.

5.1. Սույն կարգի 4-րդ կետի համաձայն հաստատված մեթոդների հիման վրա հաշվետու ամսվա համար կատարված փաստացի հաշվարկների արդյունքները:

5.2. Իրավական նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող փաստաթղթերով հիմնավորված կորուստները:

6. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի սույն կարգում նշված տնտեսավարող սուբյեկտները, հարկվող շահույթը որոշելիս, համախառն եկամուտը, նախքան հարկումը, նվազեցնում են **փաստացի (բնական) կորուստի** չափով: